

Ով կրնայ կարծել որ այնպիսի տաժա-
նելի ճամբորդութենէ մը ետեւ , այդ
ցամաք և շատ տեղ սառերով ծած-
կուած լեռանց քովերը անանկ երկրի
մը հանգըպիս որ աշխարհքիս ամէն
զաւառներէն աւելի բարձր դիրք ունե-
նայ , այրեցած գօտւոյն ճիշդ մէջտեղե-
րը , և ուր որ տաքութիւնը անտանելի
է՝ ու ցուրտն ալ բաւականապէս զգա-
լի : Վարձեալ ով կրնայ երեւակայել որ
այս զուարճալի նահանգը կերպով մը
անմատչելի լեռան մը ոտքն ըլլայ՝ որուն
կողերը ձիւնով ծածկուած են և կա-
տարքն ալ հրաբուխներով բորբոքեալ :

Միացեալ Նահանգաց վերջին աշ- խարհամարը :

Եւրոպիոյ ընդհանուր անստոյգ վի-
ճակին մէջ և Եւրոպիոյ զարմանալի յա-
ջողութեանցը մէջ ոչինչ ընդհատ ամե-
նուն զարմանքի և ուշադրութեաննիւթ
եղած է Միացեալ Վահանգաց մէջ
ծագած խռովութիւնն և անոնց այլ
և այլ հասարակապետութեանց պա-
ռակտումը , որուն ինչ պատճառէ առաջ
զալը գեռ որոշ չիմացուիր : Եւրոպիոյ
յայտնի է որ խռովութեան գլխաւոր
պատճառներէն մէկն ալ է 1860^{ին} եղած
աշխարհամարը . զոր ահաւասիկ կը դը-
նենք հոս , 1850^{ին} եղած աշխարհամա-
րին հետ բազդատելով :

Միացեալ Վահանգաց բնակիչը ըստ
1860^{ին} աշխարհամարին , ընդ գերի և
ընդ ազատ , 31 միլիոն 648,496 հոգի
համրուած է , որ 1850^{ին} 23 միլիոն
191,570 էր . ուրեմն տասը տարուան մէջ
8 միլիոն 456,926 աճեր է , որ է ըսել
100^{ին} 36 հոգի : Զկայ ուրիշ աշխարհք
մը որ այս աստիճան շուտ բազմանայ .
և օրինակի համար Վաղղիոյ մէջ Ժո-
զովուրգը այսչափ աճելու համար ութ-
սուն տարի պէտք եղած է : Իսկ Միա-
ցեալ Վահանգաց այսպէս յորդութե-
աճելուն պատճառն է այն անհամար
զաղթականութիւնքն՝ որով ամէն տա-

րի Վերմանիայէն , Լուրանտայէն և ու-
րիշ շատ աշխարհքներէ 400,000 հո-
գիէ աւելի հոն կը գաղթուին ու Միա-
ցեալ Վահանգաց հետ կը միանան :

Վաղղի հիմա ժողովրդեան երկու
մեծ բաժանմանը , այսինքն գերեաց և
ազատաց , այս համեմատութիւնս կը
տեսնեմք .

	1850	1860
Ազատք	19,987,571	27,648,645
Գերիք	3,203,999	3,999,853
Գումար	23,191,570	31,648,496

Ուստի տասը տարուան մէջ ազատ Ժո-
զովուրգը 7 միլիոն 661,072 հոգի ա-
ճեր է . կամ 38½ առ 100 . երբ գերիք
հազիւ թէ 795,854 աճեր են , որ է ը-
սել 25 առ 100 : Հիմա տեսնենք թէ
ինչպէս այս երկու ժողովուրդները հա-
սարակապետութեան Վահանգաց և
զաւառաց մէջ կը բաժնուին :

Ա . Եւրոպիոյ Նահանգք . — Ըստ 1860
տարւոյն աշխարհամարին՝ 23 ազատ
Վահանգք կը համրուին , ընդ ամէնը
19 միլիոն 46,173 հոգի ազատ բնակ-
չք :

Բ . Վերի գործածող Նահանգք . —
Միանգամայն առնելով նաեւ վիճակ-
ներն ու մանր երկիրները՝ 17 Վահանգք
կը համրուին , որոնց բնակիչքը 8 միլիոն
602,470 ազատ ժողովուրդ են , և 3 մի-
լիոն 999,853 գերիք են , որոնց ամ-
բողջ գումարը կ'ըլլայ 12 միլ . 602,323 :

Եւրոպիոյ գումարս եթէ 1850^{ին} եղած
աշխարհագրին գումարին հետ բազդա-
տենք , ազատ Վահանգաց մէջ 41 առ
100 աճումն կը գտնենք . և այսպէս ,
գերի գործածող Վահանգաց համար
ազատ ժողովրդեան աճումն է 32 առ
100 , իսկ գերեաց՝ 22½ առ 100 :

Հոս ալ ուրեմն նոյնպէս ազատ Ժո-
զովրդեան կողմանէ երազ աճումն կը
տեսնուի . և ըսածնիս աւելի յայտնի
կ'երևնայ եթէ իւրաքանչիւր Վահանգ
առանձին առանձին առնուին : () օրինա-
կի համար Վիրձինիա՝ որ ամենէն շատ
գերի բնակիչ ունեցող Վահանգն է , հա-
զիւ թէ տասը տարուան մէջ 5 առ 100

գերի բնակիչը բազմապաւ . և ընդհա-
կառակն ազատ ժողովուրդը աճեցաւ
15 առ 100: Կան նաև մէկ երկու Վա-
հանգներ ալ ուր որ գերիները բնաւ չեն
աճած: Ս'երկընտի մէջ, գերիք՝ որ
թէպէտ արդէն իսկ քիչ են, 61 առ
100 նուազեցան . Տեւառերի մէջ ալ

նոյնպէս պակսեցաւ՝ 34 կամ 35 առ
100:

Եւ իհարկէ համառօտ մը կը դնենք գե-
րի գործածող Վահանգաց մէջ եղած
գերի և ազատ ժողովրդոց ցուցակը,
ըստ 1860^ի աշխարհահամարին:

Վիրճինիա
Միսսուրի
Հար. և Հիւս. Գարովինա
Քէնզըքի
Գէննըստի
Մէրիլլենտ
Ճէորճիա
Ալապամա
Գեքոսս
Միսիսիբի
Արքանսաս
Ուրիշ վեց Նահանգք և վիճակք ալ .

Ազատք	Գերիք
4,097,373	495,826
4,085,595	445,619
988,154	735,562
920,077	225,400
859,528	287,412
646,183	35,582
615,336	467,471
520,444	435,463
445,799	484,936
407,054	479,607
334,710	409,065
715,223	428,390
8,602,470	3,999,853

Հոս մէկ Վահանգ մը, այսինքն միայն
Միսիսիբիի մէջ, գերի ժողովուրդը՝ ա-
զատ ժողովրդէն առաւելեալ կը տես-
նենք. նոյնպէս է նաև եթէ հարաւային
Գարովինան առանձին առնունք . յո-
րում 407,185 սեւք կը համրուին, և 308,
186 սպիտակք: Ալ երջապէս, այն Վա-
հանգներն միայն առնելով ուր որ գերե-
վարութիւնն թոյլ տուեալ է, 1000
հոգւոյ մէջ 317 սեւ են, որ է ըսել ժո-
ղովրդեան երկու երեքը սպիտակ են:

մենակեր կենդանւոյս համար ուտելիք
չկայ որուն ահաւայ չմերձեցունէ, մա-
նաւանդ բուսական ուտելեաց . իր եղ-
ծիչ բնաբոյս բարուքը և ոչ իսկ քաղցուն
չծառայող բաներուն ալ կը խնայէ, ինչ-
պէս են լաթեղէններն ու ուրիշ ամէն
գործուածք:

Գաշտաց մէջ մուկն երկրագործու-
թեան հարուածն ու պատիժն է . օդոց
անհարթութիւններէն պաշտպանուե-
լու համար որջ մը, խլուրդի բոյն մը կը
դնեն ու հոն կը հաստատէ բնակու-
թիւնը, և կենաց ամէն գիւրութիւն-
ները չորս կողմը կը շարէ, և ատենին
պաշար կը ժողովուէ, ցորեն, կաղին,
խոզկաղին, որպէս զի անկերակուր
չմնայ ու սով չքաշէ:

Եւ տանի և դաշտային միկն զատ,
գլխաւոր մկանց կարգը պէտք է համա-
րել նաև ջրային մուկն, որ մասնաւո-
րապէս կենդանական ուտելեօք կը սնա-
նի: Երկայ լճերու, ճահիճներու, գե-
տակներու, և առուակներու ափանցը
վրայ կ'ապրի, և ասոր ալ փաստը կը հաս-
նի մարդուս . վասն զի այս ջրոց մէջ
բնակող ձկանց մանրներն բոլոր կ'եղծա-
նէ, որոնք մարդուս սննդեանը կը ծա-

Մոռկն և գաղթականութիւնն մկանց:

Հնձոց և այն ամէն բանի որ մարդուս
սննդեանը կը ծառայէ՝ մեծ թշնամի է
մուկն, այն սրկորաժետ կրծողն՝ որ ինչ
դանէ կ'եղծանէ, երկրիս ամէն բնա-
կելի մասանցը վրայ սփռուած է, և ամէն
գի իր բնակութիւնն հաստատած է,
թէ շինից մէջ, թէ դաշտաց մէջ և թէ
ջրոց ափանց վրայ:

Եւ ինչից մէջ պատերն ու յարկերը կը
ծակէ ու հոն կ'ապաստանի, և մարդուս
գործածութեանը ծառայող ամէն բան
կ'ապականէ ու կը փճացընէ . այս ա-